

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL ՄԱՅՐ ՏԱՆԱԸ

ԿԻՐԱԿԻ 12 Մայիս 2019

110

DIMANCHE, 12 Mai 2019

## ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

**ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ**  
**DIMANCHE ROUGE**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
**ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

13. 16- 43

**ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ**

5. 1- 14

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ**

5. 19- 30

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

1 PIERRE 5. 1- 14

JEAN 5. 19- 30

**Պատարագիչ՝ Հոգևոր Հովիվ**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին**

**Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ Ժամը 10:30-ին**

**La Sainte Messe à 10:30**

**Deacons - Acolytes**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**

**Organists: Mr. Karen Manucharyan**

**Mrs. Houri Bedrossian**

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

### 1-ԻՆ ՆԱՄԱԿԷՆ

#### 5. 1- 14

Ձեր մէջ եղող երեցներուն կ'աղաչեմ, ես ալ նոյնպէս երեց ըլլալովս, Քրիստոսին չարչարանքներուն վկայ եւ մասնակից հանդերձեալ փառքին որ պիտի յայտնուի, Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ո՛չ թէ ակամայ՝ հապա կամաւ, ո՛չ թէ անարգ շահախնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ, Ո՛չ թէ վիճակներուն վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով. Եւ Հովուապետին երեւցած ատենը փառքի անթառամ պսակը պիտի ընդունիք:

Նմանապէս դո՛ւք, երիտասարդներ, հնազա՛նդ եղէք ձերերուն: Ամէնքդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. վասն զի Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ: Ուրեմն Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէս զի ձեզ ժամանակին բարձրացնէ: Ձեր ամէն հոգը անոր վրայ ձգեցէ՛ք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ:

Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանան՝ մոնչող առիծի պէս կը պտըտի ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ: Անոր դէմ կեցէ՛ք հաւատքով հաստատուած, գիտնալով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները կը կրեն:

Եւ բոլոր շնորհներու Աստուածը, որ մեզ իր յաւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսին միջոցով, քիչ մը ատեն նեղութիւն կրելէ ետքը, ինք ձեզ թող կատարեալ ընէ՛, հաստատէ՛, զօրացնէ՛ ու հիմնէ՛: Իրեն փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սիդուանոս հաւատարիմ եղբոր ձեռքով, ինչպէս ես կը կարծեմ, համառօտ մը ձեզի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ կեցեր էք: Բարեւ կ'ընէ ձեզի Բաբելոնի մէջ եղած եկեղեցին, որ ձեզի հետ ընտրուած է ու իմ որդիս Մարկոսն ալ: Բարեւ տուէք իրարու սիրոյ համբոյրով. խաղաղութիւն ձեր ամենուն հետ, որ Քրիստոս Յիսուսին մէջ էք: Ամէն:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### 5. 19- 30

Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, 'Որդին ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, միայն այն՝ ինչ որ Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ': Քանզի Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ եւ ասոնցմէ ա՛լ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք: Վասն զի ինչպէս Հայրը մեռելները կը յարուցանէ ու կը կենդանացնէ, այնպէս ալ Որդին որոնք կ'ուզէ կը կենդանացնէ: Քանզի Հայրը մէ՛կը չի դատեր, հապա ամէն դատաստան Որդիին տուաւ. Որպէս զի ամէնքը պատուեն Որդին, ինչպէս Հայրը կը պատուեն: Ան որ Որդին չի պատուեր, զանիկա դրկող Հայրը չի պատուեր: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ 'Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէ դէպի կեանք անցած է': Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ժամանակ պիտի գայ եւ հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ անոնք որ կը լսեն, պիտի ապրին: Վասն զի ինչպէս Հայրը իր անձին մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդիին տուաւ, որ իր անձին մէջ կեանք ունենայ, Եւ դատաստան ընելու իշխանութիւն ալ տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է: Ասոր վրայ մի՛ զարմանաք. վասն զի ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններուն մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, Ու դուրս պիտի գան: Անոնք որ բարի գործեր են՝ կեանքի յարութեան համար եւ անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար»:

«Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ եւ իմ դատաստանս արդար է, վասն զի ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա անոր կամքը որ զիս դրկեց»:

### 1 PIERRE 5. 1- 14

Je prie les Anciens qui sont parmi vous, moi qui suis Ancien avec eux, et témoin des souffrances de Christ, et participant de la gloire qui doit être révélée, [et je leur dis] : Paissez le Troupeau de Christ qui vous est commis, en prenant garde sur lui, non point par contrainte, mais volontairement; non point pour un gain déshonnête, mais par un principe d'affection. Et non point comme ayant domination sur les héritages [du Seigneur], mais en telle manière que vous soyez pour

modèle au Troupeau. Et quand le souverain Pasteur apparaîtra, vous recevrez la couronne incorruptible de gloire.

De même, vous jeunes gens, soyez soumis aux Anciens, et ayant tous de la soumission l'un pour l'autre, soyez parés par-dedans d'humilité, parce que Dieu résiste aux orgueilleux, mais il fait grâce aux humbles.

Humiliez-vous donc sous la puissante main de Dieu, afin qu'il vous élève quand il en sera temps; Lui remettant tout ce qui peut vous inquiéter : car il a soin de vous. Soyez sobres, [et] veillez : car le diable, votre adversaire, tourne autour de vous comme un lion rugissant, cherchant qui il pourra dévorer. Résistez-lui [donc] en [demeurant] fermes dans la foi, sachant que les mêmes souffrances s'accomplissent en la compagnie de vos frères, qui sont dans le monde.

Or le Dieu de toute grâce, qui nous a appelés à sa gloire éternelle en Jésus-Christ, après que vous aurez souffert un peu de temps, vous rende accomplis, vous affermis, vous fortifie, [et] vous établisse. A lui soit la gloire et la force, aux siècles des siècles, Amen!

Je vous ai écrit brièvement par Silvain notre frère, que je crois vous être fidèle, vous déclarant et vous protestant que la grâce de Dieu dans laquelle vous êtes est la véritable. [L'Eglise] qui est à Babylone, élue avec vous, et Marc mon fils, vous saluent. 14Saluez-vous l'un l'autre par un baiser de charité. Que la paix soit à vous tous, qui êtes en Jésus-Christ, Amen!

### **JEAN 5. 19- 30**

Mais Jésus répondit, et leur dit : en vérité, en vérité je vous dis, que le Fils ne peut rien faire de soi-même, sinon qu'il le voie faire au Père : car quelque chose que le Père fasse, le Fils aussi le fait de même. Car le Père aime le Fils, et lui montre toutes les choses qu'il fait; et il lui montrera de plus grandes œuvres que celle-ci, afin que vous en soyez dans l'admiration. Car comme le Père ressuscite les morts et les vivifie, de même aussi le Fils vivifie ceux qu'il veut. Car le Père ne juge personne; mais il a donné tout jugement au Fils; Afin que tous honorent le Fils, comme ils honorent le Père; celui qui n'honore point le Fils, n'honore point le Père qui l'a envoyé.

En vérité, en vérité je vous dis : que celui qui entend ma parole, et croit à celui qui m'a envoyé, a la vie éternelle, et il ne sera point exposé à la condamnation, mais il est passé de la mort à la vie.

En vérité, en vérité je vous dis : que l'heure vient, et elle est même déjà [venue], que les morts entendront la voix du Fils de Dieu, et ceux qui l'auront entendue, vivront. Car comme le Père a la vie en soi même, ainsi il a donné au Fils d'avoir la vie en soi-même. Et il lui a donné le pouvoir de juger parce qu'il est le Fils de l'homme. Ne soyez point étonnés de cela : car l'heure viendra, en laquelle tous ceux qui sont dans les sépulcres entendront sa voix. Et ils sortiront, savoir ceux qui auront bien fait, en résurrection de vie; et ceux qui auront mal fait, en résurrection de condamnation.

Je ne puis rien faire de moi-même : je juge conformément à ce que j'entends, et mon jugement est juste; car je ne cherche point ma volonté, mais la volonté du Père qui m'a envoyé.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

«Արին մարտիրոսաց , հիւմ եկեղեցոյ »

Յարգելի քրիստոսաւեր քոյրեր եւ եղբայրներ,

Յինանց շրջանի գունագեղ Կիրակիներէն Ս. Զատիկին յաջորդող երրորդ Կիրակին Կարմիր կը կոչուի՝ «զի Տէրն երեւի որպէս ի Զատիկի օրն Կիրակի»: Այս անուանումն է, որ ունի ժողովրդական ծագում: Կարմիր Կիրակին Նահատակաց կամ Սրբոց Կիրակի ալ կը կոչուի:

Եկեղեցոյ մէջ այս գունագեղ անուան հետ կապուած որեւէ արարողութիւն չի կատարուիր, որեւէ շարական չկայ: Թերեւս ըստ սովորութեան որոշ եկեղեցիներու մէջ Կանաչ եւ Կարմիր Կիրակիներուն արտաքին փոփոխութիւն կը նկատուի. եկեղեցիին վարագոյրը, պատարագիչին զգեստը, դպիրներուն շապիկը կանաչ եւ կարմիր կ'ըլլան օրուան համապատասխան: Իսկ որոշ գաւառ-

ներու եւ գիւղերու մէջ, ըստ գունագեղ Կիրակիներուն, կանաչ կամ կարմիր կը հագուին:

Կարմիր Կիրակին իր այլաբանական բացատրութեամբ կը խորհրդանշէ Քրիստոսի արեամբ ծաղկած Կիրակի եւ Անոր արեամբ հաստատուած եկեղեցի:

Կարմիր Կիրակին, ըստ ոմանց, նուիրուած է անտարանական այն պատմութեան, թէ ինչպէս Յիսուս հերթական անգամ երեւցաւ աշակերտներուն Տիբերիայի լիճի ափին: Պետրոսը վերստին կոչուեցաւ իր պաշտօնին. Քրիստոս անոր երեք անգամ հարցուց. «Սի՛մո՛ն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս»: Պետրոսը երեք անգամ պատասխանեց Յիսուսին՝ վստահեցնելով. «Այո՛, Տէ՛ր, Դուն գիտես, որ կը սիրեմ Քեզ»: Ի պատասխան այդ վստահեցման՝ Տէրը երեք անգամ ալ Պետրոսին յանձնարարեց. «Արածե՛ Իմ ոչխարներս» (Յովհաննէս 21:1-19):

Կարմիր գոյնի խորհրդանիշներուն անդրադառնալով՝ կը տեղեկանանք, որ Եսայի մարգարէն համարած է այդ որպէս ՅԱՂԹԱԿԱՆ գոյն. «Ո՞վ է աս, որ սուրալով կու գայ Եղովմէն, որուն զգեստները Բոսորի կարմրութիւնն ունին, գեղեցիկ պատմուճանով եւ հուժկու զօրութեամբ...ինչո՞ւ կարմիր են զգեստներդ հնձուորի հանդերձներու նման» (Եսայի 63:1-2):

Կարմիրը ոչ միայն յաղթանակի, այլ նաեւ պայքարի խորհրդանիշ է: Մարտական դրօշները, պայքարներն ու հերոսները բնորոշուած են կարմիր մակդիրով: Քրիստոնէայի համար սովորական դարձած է այն ասացուածքը, որ կ'ըսէ. «Կեանքը պայքար է»: Ան ամէն օր, պայքարելով մեղքին եւ չարին դէմ, կընթանայ պայքարի ուղիով: Այդ ուղին նեղ է եւ անձուկ, բայց կ'առաջնորդէ դէպի Կեանք եւ Յաղթանակ: Ան մկրտութեան եւ դրոշմի խորհուրդներովը կ'օժտէ հոգեւոր կենսական նոր սկզբունքով, կը ստանայ անհրաժեշտ զօրութիւնն ու կարողութիւնը պայքարելու ապականիչ այն չար ուժերուն դէմ, որոնք կը սպառնան խաթարել, տկարացնել կամ սպանել անոր հոգեւոր կեանքը: Քրիստոնէան ուժեղ մարտիկի կերպար է, անոր համար օտար են վախը, թուլութիւնը, յուսահատութիւնը:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ Մայիս 9-ին նշուող տօները մէկ օրուայ մէջ նշուելու չեն: Կը կարծեմ՝ վաղուց արդէն շատերու մօտ է, որ ամբողջ Մայիս ամիսը կընկալուի յաղթական: Ոչ միայն Պեղիինի գրաւման ու Մեծ յաղթանակին, ոչ միայն Շուշիի ազա-



տագրումին եւ աւելի Մեծ Յաղթանակի ամիս է Մայիսը, այլեւ Աւարայրն ալ Մայիս ամսուն է, Սարդարապատ-Բաշ Ապարան-Ղարաքիլիսա եռաճակատ յաղթանակն ալ Մայիսին է: Մահուան դէմ ամենամեծ Յաղթանակի՝ Քրիստոսի Յարութեան 50-օրեայ տօնական շրջանն ալ գրեթէ միշտ այս ամսուն է:

Այնպէս որ, ամբողջ ամիսը նշուող ՅԱՂԹԱՍՕՆ է:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԻԱՆԴՈՅԹԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՏՕՆԸ:

Թող մեր Ոգին առաւել զօրաւոր ըլլայ յաղթած հերոսներով եւ իրենց յաղթանակ շնորհած Տիրոջմով:

Ս. Յարութիւնը մահուան դէմ յաղթանակ է, Մայիսեան յաղթանակներն ալ՝ Յարութեան հաւատացողներուն յաղթանակն է մահ սփռողներուն դէմ, ըլլան անոնք՝ հայրենիքին հարեւան, թէ հեռաբնակ ազգերէն:

Թող Տիրոջ հրեշտակներուն բանակը առաջնորդ ու պահապան ըլլայ յանուն հայրենիքի, հաւատքի, սիրոյ եւ արդարութեան համար ֆիզիքապէս ու բարոյապէս կոռուղ իւրաքանչիւր անհատի:

Ինչպէս գիտէք, այսօր նաեւ՝ մեր սիրելի մայրերուն տօնն է: Մեզի համար հրաշալի օր մըն է, գեղեցիկ առիթ մը, երբ մենք կրնանք մեր ջերմ եւ ուրախ ժպիտով շնորհաւորել մեր անուշիկ մայրերուն սքանչելի տօնը:

Ընտանիքը աշխարհին սիրտն է: Իսկ այս սիրտին մէջ գլխաւոր երակը մայրն է, որուն ընդմէջէն արեան փոխարէն սէր կը հոսի: Անյատակ ծով մը եւ անհուն տիեզերք մըն է մօր սիրտը: Մայրական սէրը կը նմանի մաքուր ու անարատ կաթի:

Քանի որ Աստուած ֆիզիքապէս միայնգամայն ամէն տեղ չէր կրնար ըլլալ, այդ պատճառով ստեղծած է մայրը: Ծաղկաստան է մօր սիրտը: Իր զաւակը կուրծքին սեղմելով կողողէ անոր իր սիրտին երփներանգ ծաղիկներուն բոյրովը: Մանուկը կը շնչէ այդ դրախտային մթնոլորտէն եւ կը խմէ աստուածային սիրոյ նեկտարէն:

Մայրը մեր սէրն է, ուրախութիւնն ու քաղցրութիւնը:

Ինչքան գեղեցիկ խօսքեր ու արտայայտութիւններ պէտք են, նկարագրելու համար, թէ «Ո՞վ է մայրը» եւ կամ «Ի՞նչպիսին է մայրը»: Մայրը նոր մարդու կեանք տուողն է, ստեղծիչը նոր էակի, որուն համար շատ անգամներ եթէ պէտք եղած է, զիտակցօրէն զոհած է իր երիտասարդ կեանքը:



Մօր նկարագիրը քաղցր է ու սուրբ: Ան իր կամքովը՝ տունին սինն է, հաւատքով՝ հիմը, իսկ իր սիրով՝ սիրտն ու հոգին: Մայրը իր գաւկին առաջին ու լաւագոյն դաստիարակն է, որ անոր կը սորվեցնէ բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Ան ճարտարապետ մըն է, որ ոչ միայն իր գաւկին նկարագրին յատկագիծը կը գծէ, այլ նաեւ կը կերտէ անոր ուղիղ, ապահով ու յաջող ճանապարհը: Կեանքին մէջ իւրաքանչիւրիս համար ամենաքաղցր խօսքերն են երկինք, տուն, սէր եւ մայր:

Թող իւրաքանչիւր գաւակ իր մօրը սիրէ առանձնայատուկ երկիրդածութեամբ ու իր սէրը գործի վերածէ, որպէսզի ան մայրամուտին ստանայ մօր բացառիկ օրհնութիւնը: Իմ կարծիքովս աւելի մեծ երջանկութիւն չկայ, քան մօր օրհնութեամբ ապրիլը:

Պօղոս առաքեալը կը յորդորէ բոլոր գաւակներուն, անոնց ուշադրութեան յանձնելով այս խօսքերը. «Որդիներ՝, հնազանդ եղէք ձեր ծնողներուն ի Տէր, որովհետեւ այդ է ճիշտը» (Եփես. 6:1) Հնազանդիլ կը նշանակէ յարգել ու սիրել:

Շնորհաւոր Ձեր բոլորին տօնը, սիրելի եւ առիւծածին Մայրեր:

Մեր աղօթքն է, որ Դուք միշտ երջանիկ, ուրախ եւ հպարտ ըլլաք, որ բարի եւ արդար գործ կատարած էք առիւծ գաւակներ ծնանելով ու ազգը հարստացնելով: Օրհնեա՛լ ըլլաք: Աստուած Ձեզ ընտրած է ու վստահ եղէք, որ Ձերն է Աստուծոյ Տան մէջ վայելելու սէրը եւ ուրախութիւնը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից .Ամէն:

### **ՇԱԲԹՈՒՍՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ**

«Իսկապէս հաւատայ, որ մենք այնքան ատեն կը տառապինք, քանի դէռ խորնարհած չենք: Երբ խոնարհինք, կու գայ տառապանքներու վերջը, քանի որ Աստուծոյ Հոգին խոնարհութեան համար կ'աւետէ հոգիին, որ ան փրկուած է»:

*Ս. Սիվիդանոս Աթոսացի*

«Ինչպէս ցանկացուած հիւանդութեան համար կայ բուժում, այդպէս ալ իւրաքանչիւր մեղքին համար կայ ապաշխարութիւն»:

*Ս. Սերաֆիմ Սարովցի*



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### ԱՂՕԹՔ

### ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ

Սրտի խորերէն խօսք Աստուծոյ հետ

Ժ

Իրենց կորստական բերքերուն

Եւ դժնդակարմատ շառաւիղներուն

հետ միասին

Կորզէ, իլէ զանոնք քու

ամենակալ ձեռքովդ,

Որ հոգիներուն կալուածները

կ'արօրադրես ու կը մշակես միշտ,

Կենաց խօսքդ արդիւնագործելու համար:

(Շարունակելի)

## **PRIÈRE EN DEMANDE DE BONNE SANTÉ**

X

Toutes les formes et espèces de maladies diverses

qui donnent la mort par leurs fruits

particuliers de perdition,

par leurs rejets à la racine perverse

qui s'établissent dans le champ inique de mon corps,

extirpe-les de ta main toute-puissante :

Toi qui, toujours la main \ la charrue,

Cultives aussi la terre des âmes

Pour la fructification de ta parole de vie.

(À suivre)

**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ԿԻՐԱԿԻ, 12 Մայիս 2019**



Առաջնորդ Սրբազան Հօր թելադրանքով եւ փափաքով  
Հոգեւոր Հովիւին, Ծիսական Խորհուրդին  
եւ Յարակից մարմիններուն խնդրանքով,  
հոգեհանգստեան կարգ պիտի կատարուի՝  
Ի Յիշատակ

Զինուորաց, Աշխարհաւորաց եւ Զօրավարացն Հայոց,  
որք կատարեցան Երկրորդ Համաշխարհային պատերազմին  
եւ Արցախեան գոյամարտին վասն հաւատոյ եւ վասն Հայրենեաց  
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի



Պր. Յովակիմ Սարըմանուկօղլուի եւ զաւակներուն եւ Թոռնիկին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

**ԽՈՍՐՈՎՈՒՅԻ ՍԱՐԸՄԱՆՈՒԿՕՂԼՈՒԻ  
(KOHSROVUHI SARIMANUKOGLU)**

Մահուան առաջին տարելիցին առիթով  
Ինչպէս նաեւ՝ Նորոգ հանգուցեալ  
**ՄԱՆՈՒՇԱԿ ԷՐՔԻՄԻՍԵԱՆԻ  
(MANUSHAK ERKIMISIAN)**

ԵՒ

**ՄԱՐԻԱՄ ՍԱՐԸՄԱՆՈՒԿՕՂԼՈՒԻ  
(MARYAM SARIMANUKOGLU)**

**ԱԼԻՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ (ALIS MOURADIAN)**

**ԺԱՆԷԹ ԱՔՊՈՒԼՈՒԹԻ (JANET AKBULUT)**

Հոգիներուն ի հանգիստ

(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տ. եւ Տիկ. Այտա եւ Նինօ Ճամպազեանի,  
Տ. եւ Տիկ. Նորա եւ Ալեքս Գունդերեանի եւ ընտանիքին,  
Տ. եւ Տիկ. Լիպարիտ եւ Ճուլէն Գասապեանի եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԷՏՈՒԱՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ (EDOUARD KASSABIAN)**

Մահուան 10-րդ տարելիցին առիթով  
ԵՒ

**ԱՂԱՒՆԻ ԳԱՍԱՊԵԱՆԻ (AGHAVNI KASSABIAN)**

Մահուան 2-րդ տարելիցին առիթով  
**ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՍԲ ԵՂԻՑԻ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ**

**ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒԱՆ**

**Մայիս– Mai**

**13, Երկուշաբթի – ԻԳ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Lundi 13 – 23ème jour de la période des 50 jours  
qui vont jusqa à la Pentecôte**

**14, Երեքշաբթի – ԻԴ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Mardi 14 – 24ème jour**

**15, Չորեքշաբթի – ԻԵ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Mercredi 15 - 25ème jour**

**16, Հինգշաբթի – ԻԶ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Jeudi 16 – 26ème jour**

**17, Ուրբաթ – ԻԷ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Vendredi 17 – 27ème jour**

**18, Շաբաթ- ԻԸ ՕՐ ՅԻՆԱՆՅ**

**Samedi 18 – 28ème jour**

**ՆՈՒՐԱՏՈՒՌԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ**

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

**CHURCH:**

Mrs. Maro Markarian \$300, Mrs. Meline Halebi \$70  
**IN HONOUR OF REV. FR. DAVID MARGARYAN PECTORAL**

**CROSS:**

Dr. & Mrs. Archavir & Nadia Gundjian \$100  
**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

**THE LATE VARJAN AVANUS:**

Mrs. Marie Jebekian \$100, Mr. Vatche Haroutiounian \$50, Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen, Mrs. Elizabeth Jebekian & Family \$40, Mr. Ata Yuruk, Mr. Setrak Arslan, Mr. & Mrs. Frengul & Hilda Kaliatzian \$20

**HOKEHANKISD (REQUIEM SERVICES)**

**IN MEMOY OF:**

**THE LATE AKABI VARTANYAN KEORHADZIAN:**

Mrs. Armine Sirinyan \$40

**THE LATE DR. ARMEN PARUNAK**

Mrs. Ani Parunak \$200, Mr. & Mrs. Garo & Nevart Paragamyán, Mr. & Mrs. Aram & Aslin Seropian, Mr. & Mrs. Ayk & Rina Bagdasarian, Mr. & Mrs. Viken & Aylin Paragamyán \$100, Mr. Alex Seropian, Mrs. Anni Seropian, Mr. & Mrs. Diran & Vilma Attarmigiroglu, Mr. Vahn Keresteciyán \$50, Mrs. Armine Sirinyan \$40

**THE LATE ARMENAK OULOUSIAN**

Mrs. Bayzar Kanar, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar \$100, Mr. Vahn Keresteciyán, Mrs. Elizabeth Adjeleian, Mr. & Mrs. Avedis & Mary Basmadjian \$50, Mr. Jirayr Gazeryan, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$30

**THE LATE MIHRAN ZAVZAVADJIAN:**

Mr. & Mrs. Nurhan & Hasmik Cankul \$50

**MOTHER'S DAY**

**IN MEMORY OF:**

**THE LATE SIRANOUCHE MAGHAKIAN AROYAN:**

Miss Shoushan Aroyan \$50

**EASTER BASKETS:**

Mr. & Mrs. Oskan Hazarabedian \$100, Mrs. Alis Dolar \$40

**YOUGHAKIN EASTER:**

Mr. Hemayak Toufayan \$100, Mr. & Mrs. Kevork & Maral Partamian \$50, Mr. & Mrs. Herair Amirian \$20



## ԿԻՐԱԿՆԱՍՈՒՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Միրով կը յայտնենք, թէ Յունիս ամիսէն սկսեալ, իւրաքանչիւր ամսուայ վերջին Շաբաթ օրը երեկոյեան ժամը՝ 5-ին, Կիրակնամուտի Ժամերգութիւն պիտի կատարուի Սոնթրէալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Հոգեւոր Հովիւ՝

Տ. Դաւիթ Քնյ. Մարգարեան

### **HOLIDAYS - RED SUNDAY**

In the Calendar of the Armenian Church, the third Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is known as Red Sunday.

The color “red” has been used throughout history to represent many things. One of the symbolic meanings is the blood of the martyrs who were sacrificed for Christ, His Holy Church, and their Christian faith. During the early years of Christianity, faithful followers of Jesus Christ were subjected to severe persecutions and torments. Many elected to die rather than betray their principles of life and faith, which the Incarnate God - Christ Jesus - had endowed to them and all of mankind. The psalmist writes, “Precious in the sight of the Lord is the death of the saints” (Psalms 116:15).

Today, martyrdom is far less often an occurrence in the lives of Christians, yet it does happen. However, the greater struggle is the one against sin, which we can see manifested in many ways throughout the world. The battle against wickedness and evil, which will be victorious in the end, is the current expression of the significance of Red Sunday. The Apostle Paul writes that Christ Himself endured such opposition, that we should not grow weary in our battle against wickedness. In his letter to the Hebrews, Paul says: “In your struggle against sin, you have not yet resisted to the point of shedding your blood.” (Hebrews 12:4). We are to use the opportunity of Red Sunday to once again remind ourselves of Paul’s exhortation to remain steadfast in the Lord, and to continue our daily labors of goodness and righteousness.



## **ՆԻՍՏ ՈՒ ԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ**

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հր-րաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդու-թին ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստ-ներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագորումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արար-ողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատ-րաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՈՒՌԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պէտք է տիրէ:

## **OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER**

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Église pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Église est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.





Հայց. Առաքելական  
Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդական Մայր Եկեղեցի

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հինգշաբթի, 30 Մայիս 2019

**ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՍԱՅ  
ՊԱՏԱՐԱԳ**

*առաւօտ. ժամը 11-ին*

**ՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ  
ՎԻՃԱԿ**

«Մարի Մանուկեան» սրահին  
մէջ

Մուտքի Ծուր' \$10

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Օթթայիւսի սպասարկութիւն.  
-Արարատ Բնակարաններէն  
առաւօտեան ժամը 10:15-ին  
-Manoir Gouin-էն առաւօտեան  
ժամը 10:30-ին



## HAMPARTZOOM

Thursday, May 30, 2019

**DIVINE LITURGY**

at 11:00 am

FESTIVE LUNCH & VIJAG in "Marie Manoogian" hall

Entrance Contribution \$10

**ATTENTION:**

Transportation available

-Habitation Ararat – 10:15 am

-Manoir Gouin – 10:30 am

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵԻՈՐ ՉՐՈՅՑ

Մեր սիրելի հաւատացեալներուն  
ուշադրութեան կը յանձնենք թէ մեր  
Հոգեւոր Չրոյցները  
Կը վերսկսինք  
Հինգշաբթի, 25 Ապրիլ 2019 երեկոյեան ժամը  
7:00-ին  
Եկեղեցւոյ մէջ:

ÉTUDES BIBLIQUES  
ET

CAUSERIES SPIRITUELLES

Nous avisons à nos fidèles que  
nous recommencerons nos soirées d'études  
Bibliques et Causeries Spirituelles  
Le jeudi, 25 avril 2019 à 19h00 à l'église.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:  
(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյ պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգևորականաց հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահրի կամ Աւագ շարթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրինէրի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափարին իրենց սրտաբուխ նուիրատութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանէ՛րքու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:*

«Հոգևոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,  
Հոգևոր Հովիւ եւ Օխական Խորհուրդ





# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն գեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ

եւ

Ծիական Խորհուրդ



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաուրիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ հովանու ներքոյ գործող Կիրակօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դաստանելոյ մասնագէտներու, սիրայօժար սկզբունքով:



- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:
- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցույ գրասենեակ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաքճրեանին (514) 690-2890:  
Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պեժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ  
Եւ  
Մի. Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

### École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
  - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութեան Եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ  
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար  
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Զին, Մարգարեան



École de dimanche  
Pour les enfants de 6 à 14 ans  
Dans une ambiance chaleureuse et amicale on  
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

**Chaque dimanche à 11 heures**

Pour plus amples informations et inscription

Contactez le secrétariat de l'Église (514) 279-3066

Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse  
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի  
կ'ունենան

Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétitions de la chorale des Jeunes ont lieu  
Les dimanches à 13:30 heures

Յաւելելալ մանրամասնութեանց համար կապ  
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de  
l'église.

### Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

#### Âge d'inscription 7 à 15 ans


- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու  
հիմնական երաժշտութեան նորթաները, միաժամանակ պիտի  
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront  
l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le  
solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի  
բաղկանայ ժամանակակից, դասական եւ  
կրօնական երաժշտական կտորներէ,  
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales  
contemporaines, classiques et religieuses, de langue française et  
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





# ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցի շաբթուայ մը բացօդայ ճամբարին, ուր ինզիսրդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատե բարակամութիւններ եւ ուրիշ ակամայ պիտի բաժնուիս անտրանայի



Դիմումագիրերը կարելի է հայթայթել [www.campararat.ca](http://www.campararat.ca) կայքէջէն:  
Հաճեցէք դիմումագիրերը դրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019  
Բւրաբանչիւր մասնակցողի համար վճարել \$555.00:  
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Ցաւելեալ տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել [campararat@gmail.com](mailto:campararat@gmail.com)  
հասցեով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծովի Հոգեւոր  
Հովիին եւ Միսական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գնատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի գուարթ, ապահով եւ  
դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւն ունենայ Քրիստոնեական հաւանքին, իր Հայկական  
պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործել իր ընկերութեան, եղելեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:



**ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

**ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ**

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



**PARKING**

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Address :** 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2